Կարգապահական գործ թիվ ԿԳ-23025

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՓԱՍՏԱԲԱՆ ԱՐՄԵՆ ՎԱՆԻԿԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը **(այսուհետ նաև՝ Հանձնաժողով)**, Հանձնաժողովի նախագահ, զեկուցող՝ Տաթևիկ Շալջյանի, Հանձնաժողովի անդամներ՝ Միքայել Դանիելյանի, Գուրգեն Թորոսյանի, Հայկ Սահակյանի և Արաքս Վարդանյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով հանրային պաշտպան, փաստաբան Արմեն Վանիկի Սարգսյանին (արտոնագիր՝ թիվ 1130) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը: Պատասխանողի համառոտ բացատրությունը.</u>**

ՀՀ գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչության ավագ դատախազ Ա.Սարգսյանը **(այսուհետ՝ նաև Դատախազ, կամ Դիմող)** ՀՀ փաստաբանների պալատ **(այսուհետ՝ նաև Պալատ)** ներկայացրել է հանրային պաշտպան, փաստաբան Արմեն Վանիկի Սարգսյանի **(այսուհետ նաև՝ Պատասխանող կամ Փաստաբան)** նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու վերաբերյալ դիմում:

Մասնավորապես, Դիմողը, դիմելով Պալատ, հայտնել է, որ 2022 թվականի դեկտեմբերի 09-ին ՀՀ զինվորական կենտրոնական դատախազությունում ստացվել է Սևանի կայազորի զինվորական դատախազի զեկուցագիրն այն մասին, որ ՀՀ ՊՆ 75937 զորամասի 1-ին հրաձգային գումարտակի 3-րդ վաշտի 2-՝-րդ դասակի 3-րդ ջոկի հրաձիգ-սանիտար, պարտադիր ժամկետային զինծառայող, շարքային Էմիլ Արայի Հարությունյանի կողմից նույն զորամասում հետագա ծառայությունը շարունակելուց հրաժարվելու դեպքի առթիվ 2022 թվականի հունվարի 25-ին 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի **(այսուհետ՝ ՀՀ նախկին քրեական օրենսգիրք)** 364-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով հարուցվել է թիվ 92150522 քրեական գործը:

2022 թվականի հունիսի 29-ին թիվ 92150522 քրեական գործը՝ ըստ մեղադրանքի

էմիլ Հարությունյանի՝ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 364-րդ հոդվածի 1-ին մասով, ուղարկվել է Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

Կիրառված համաձայնեցման վարույթի շրջանակներում Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2022 թվականի սեպտեմբերի 26-ի դատավճռով էմիլ Հարությունյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 364-֊րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության կատարման մեջ, և նրա նկատմամբ նշանակվել է ազատազրկում՝ 6 ամիս ժամկետով: ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելով սահմանվել է փորձաշրջան՝ 1 տարի ժամկետով:

ՀՀ զինվորական կենտրոնական դատախազությունում թիվ ԳԴ4/0042/01/22 քրեական գործով դատավճռի ուսումնասիրությամբ պարզվել է, որ էմիլ Հարությունյանն առաջին անգամ է կատարել հանցագործություն, որը ոչ մեծ ծանրության է, հետևաբար նրա նկատմամբ չէր կարող նշանակվել ազատազրկման ձևով պատիժ:

Դատախազը՝ որպես հանրային մեղադրող, նշված քրեական վարույթով մեղադրյալի և նրա պաշտպանի հետ համաձայնեցված վարույթի շրջանակներում իրականացված բանակցությունների արդյունքում խախտելով ՀՀ քրեական օրենսգրքի 67-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված պահանջը, կողմի հետ համաձայնության է եկել ոչ մեծ ծանրության հանցանք կատարած մեղադրյալի նկատմամբ ազատազրկման ձևով պատիժ նշանակելու վերաբերյալ:

Նշված առիթով հանրային պաշտպան Արմեն Սարգսյանից պահանջվել է բացատրություն, որի կապակցությամբ վերջինս հայտնել է, որ էմիլ Հարությունյանի կողմից կատարված հանցանքը նախատեսված է 2003թ. ապրիլի 18-ի ՀՀ քրեական օրենսգրքի 364-րդ հոդվածի 1-ին մասով և 2021թ. մայիսի 5-ի ՀՀ քրեական օրենսգրքի 529-րդ հոդվածի 1-ին մասով: Երկու դեպքում էլ արարքը համարվում է ոչ մեծ ծանրության հանցանք:

Հանրային պաշտպանը հավելել է, որ քրեական գործում առկա «ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի օպերատիվ տեղեկատու քարտադարանի ձև 8 տեղեկանքի» համաձայն՝ 2020թ. մարտի 4-ին Արտաշատի քննչական բաժնում նյութեր են նախաձեռնվել էմիլ Հարությունյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված արարքի կատարման համար, և քրեական գործն ուղարկվել է դատարան, ինչպես նաև ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության 8-րդ կայազորի բաժնի կողմից 2021թ. հունիսի 25-ին նյութեր են նախաձեռնվել ՀՀ քրեական օրենսգրքի 364-րդ հոդվածի 1-ին մասով, և 2021թ. դեկտեմբերի 24-ին քրեական գործի վարույթը կարճվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 37-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով:

Ելնելով վերոգրյալից՝ Հանրային պաշտպանը գտել է, որ էմիլ Հարությունյանը ՀՀ քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի իմաստով չի համարվում առաջին անգամ հանցանք կատարած անձ, քանի որ նրա կողմից նախկինում ենթադրյալ հանցավոր արարք կատարելու վերաբերյալ գործը գտնվում է դատարանում, և օրենսդիրը հստակ չի կարգավորել անձի կողմից ենթադրյալ հանցանք կատարելու և գործը դատարանի վարույթում գտնվելու պարագայում այլ ենթադրյալ հանցանք կատարելու մասով անձի կողմից առաջին անգամ հանցանք կատարելու փաստը

գնահատելու համար:

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ 28.06.2023 թվականին Դիմողին առաջարկվել է՝ «Փաստաբանության մասին» օրենքի **(այսուհետ՝ նաև Օրենք)** 39.5 հոդվածի 5-րդ մասին համապատասխան, գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ:

Դիմողը 04.07.2023թ. գրությամբ ըստ էության պնդել է նախկինում ներկայացված դիրքորոշումը՝ կից ներկայացնելով թիվ ԳԴ4/0042/01/22 քրեական գործով դատավճռի, ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոն օպերատիվ տեղեկատու քարտադարանի 17.05.2022թ. Ձև 8 տեղեկանքի, Եղեգնաձորի կայազորի զինվորական դատախազության դատախազի 24.12.2021թ. «Քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործով վարույթը կարճելու մասին» որոշման, 16.06.2022թ. արձանագրության, թիվ ԱՎԴ/0047/01/20 քրեական գործի վերաբերյալ «դատալեքս» դատական տեղեկատվական համակարգից արտատպված պատմության, թիվ ԳԴ4/0042/01/22 քրեական գործով Փաստաբանի կողմից կազմված վերաքննիչ բողոքի պատճենները:

2. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Պալատի նախագահի 16.06.2023թ. թիվ 150-Ա/ԿԳ-23025 որոշմամբ փաստաբան Արմեն Սարգսյանի նկատմամբ Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի, ինչպես նաև **Պալատի ընդհանուր ժողովի 2019 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ 1-Լ որոշմամբ հաստատված փաստաբանի վարքագծի կանոնագրքի (այսուհետ նաև՝ Կանոնագիրք)** 2.7.2, 2.8.1 և 3.1.7 ենթակետերի խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

22.06.2023թ. կարգապահական գործի նախապատրաստումը հանձնարարվել է Պալատի աշխատակազմի սպասարկող անձնակազմի աշխատակից՝ Գարիկ Հախնազարյանին:

21.07.2023թ. կարգապահական գործի նախապատրաստումը հանձնարարվել է Պալատի աշխատակազմի սպասարկող անձնակազմի աշխատակից՝ Հայկ Ծատուրյանին (**այսուհետ նաև՝ Աշխատակից**):

3.1. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

3. <u>Կարգապահական գործ նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը և գործի հանձնումը Հանձնաժողովին.</u>

Գործի նախապատրաստման արդյունքում Աշխատակիցը 16.08.2023թ. կազմել է եզրակացություն:

Եզրակացությամբ հաստատված է համարվել, որ գործող իրավակարգավորումների, ինչպես նաև թիվ ԳԴ4/0042/01/22 քրեական գործերում առկա հանգամանքների համատեքստում՝ էմիլ Արայի Հարությունյանը՝ որպես առաջին անգամ ոչ մեծ ծանրության հանցագործություն կատարած անձ, չէր կարող դատապարտվել ազատազրկման:

Կարգապահական գործը Պալատի Հանձնաժողովին է հանձնվել 16.08.2023թ.:

Հանձնաժողովի նիստերը տեղի են ունեցել 19.10.2023թ. ժամը 18:30-ին և 02.11.2023թ. ժամը 19:00-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

4. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Հանձնաժողովը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1. Թիվ ԳԴ4/0042/01/22 քրեական գործով՝ մեղադրյալ էմիլ Արայի Հարությունյանի պաշտպանությունն իրականացրել է հանրային պաշտպան, փաստաբան Արմեն Սարգսյանը: *Նշված փաստը հաստատվում է Դիմողի և Պատասխանողի բացատրություններով, ինչպես նաև թիվ ԳԴ4/0042/01/22 քրեական գործի վերաբերյալ «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգում առկա տեղեկություններով:*

2. Ամբաստանյալ էմիլ Արայի Հարությունյանը նախկինում դատապարտված չի եղել: *Նշված փաստը հաստատվում է թիվ ԳԴ4/0042/01/22 քրեական գործի վերաբերյալ «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգում առկա տեղեկություններով, ինչպես նաև Դիմողի կողմից ներկայացված ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոն օպերատիվ տեղեկատու քարտադարանի 17.05.2022թ. Զև 8 տեղեկանքով:*

3. Թիվ ԳԴ4/0042/01/22 քրեական գործով մեղադրյալ էմիլ Արայի Հարությունյանի վերաբերյալ վարույթով մեղադրանքը պաշտպանող դատախազի և նրա պաշտպանի հետ կնքված համաձայնության հիման վրա՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2022 թվականի սեպտեմբերի 26-ին կայացրած դատավճռով էմիլ Հարությունյանին մեղավոր է ճանաչել 2003 թվականի ապրիլի 18-ի ՀՀ քրեական օրենսգրքի 364-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության կատարման մեջ և նշանակել պատիժ՝ ազատազրկում 6 ամիս ժամկետով (2003 թվականի ապրիլի 18-ի ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կարգով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելով՝ դատարանը սահմանել է փորձաշրջան 1 տարի ժամկետով): *Նշված փաստերը հաստատվում են թիվ ԳԴ4/0042/01/22 քրեական գործի վերաբերյալ «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգում առկա տեղեկություններով:*

4. Փաստաբանը թիվ ԳԴ4/0042/01/22 քրեական գործերով կայացված դատավճիռը բողոքարկել է ՀՀ վերաքննիչ քրեական դատարան, որը 23.02.2023թ. որոշմամբ՝ բացառիկ վերանայման բողոքի հիման վրա բացառիկ վերանայման վարույթի հարուցումը մերժել է՝ բողոքը ոչ պատշաճ անձի կողմից ներկայացրած լինելու հիմքով: *Նշված փաստերը հաստատվում են թիվ ԳԴ4/0042/01/22 քրեական գործի վերաբերյալ «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգում առկա տեղեկություններով:*

5. ՀՀ քրեական օրենսգիրքը[1] նոր խմբագրությամբ ուժի մեջ է մտել 01.07.2022

---

[1] **ՀՀ քրեական օրենսգրքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝** *Ոչ մեծ ծանրության հանցանքներ են համարվում սույն օրենսգրքով նախատեսված այն արարքները, որոնց համար սույն օրենսգրքի Հատուկ մասով նախատեսված առավելագույն պատիժը չի գերազանցում 2 տարի ժամկետով ազատազրկումը, կամ որոնց համար նախատեսված է ազատությունից զրկելու հետ չկապված պատիժ:*

թվականին: Գործող իրավակարգավորումների և թիվ ԳԴ4/0042/01/22 քրեական գործում առկա հանգամանքների համատեքստում՝ էմիլ Արայի Հարությունյանը՝ որպես առաջին անգամ ոչ մեծ ծանրության հանցագործություն կատարած անձ, դատապարտվել է ազատազրկման՝ Փաստաբանի մասնակցությամբ կնքված համաձայնության պատճառով: *Նշված փաստերը հաստատվում են ՀՀ քրեական օրենսգրքի վերաբերյալ «Արլիս» իրավական տեղեկատվական համակարգում, ինչպես նաև թիվ ԳԴ4/0042/01/22 քրեական գործի վերաբերյալ «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգում առկա տեղեկություններով:*

5. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Արմեն Սարգսյանը փաստաբան է հանդիսանում 16.10.2010 թվականից և 2018-2023թթ. ընկած ժամանակահատվածում չունի կարգապահական տույժ:

6. <u>Պալատի Հանձնաժողովի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Հանձնաժողովը գտնում է, որ փաստաբան Արմեն Սարգսյանը ենթակա է կարգապահական պատասխանատվության՝ Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի, ինչպես նաև Կանոնագրքի 2.7.2, 2.8.1 և 3.1.7 ենթակետերի խախտման համար՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է՝ պահպանել Օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:*

Կանոնագրքի 2.7.2-րդ ենթակետի համաձայն՝ փաստաբանը պարտավոր է վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալ իր մասնագիտական կարողությունների սահմաններում, ինչը ենթադրում է իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն, վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն, հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում: **Կանոնագրքի 2.8.1-րդ ենթակետի համաձայն՝** *փաստաբանը պետք է շարունակաբար կատարելագործի իր գիտելիքներն ու մասնագիտական կարողությունը, ինչպես նաև հետևի օրենսդրության փոփոխություններին:*

Կանոնագրքի 3.1.7-րդ ենթակետի համաձայն՝ *իրավական օգնություն ցույց տալու հանձնարարությունն ընդունելիս փաստաբանը պետք է նկատի ունենա այն կատարելու իր մասնագիտական հնարավորությունները և պարտավոր է հրաժարվել հանձնարարությունն ընդունելուց, եթե պարզում է, որ նույն Կանոնագրքով ներկայացվող պահանջներն իր կողմից չեն կարող պահպանվել: Փաստաբանը չպետք է ստանձնի այնպիսի գործ, որով վստահորդին որակյալ իրավաբանական օգնություն ցույց տալու համար չունի անհրաժեշտ գիտելիքներ և փորձ, բացառությամբ, երբ վստահորդի համաձայնությամբ համագործակցում է անհրաժեշտ գիտելիքներ և փորձ ունեցող այլ փաստաբանի հետ:*

ՀՀ քրեական օրենսգրքի 67-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *առաջին անգամ ոչ մեծ ծանրության հանցագործություն կատարած անձը չի կարող դատապարտվել ազատազրկման:*

Փաստաբանի ձեռնհասությունը փաստաբանության ինստիտուտի հանրային ընկալման առանցքային տարրերից է, ինչի բացակայությունն արժեզրկում է փաստաբանի՝ որպես իրավապաշտպան և արդարադատության կայացմանը նպաստող գործառույթներ իրականացնող անձի հասարակական նշանակությունը: Կանոնագիրքը փաստաբանին պարտավորեցնում է մշտապես պահպանել իր մասնագիտական բարձր որակավորումը, ցուցաբերել անհրաժեշտ գիտելիքներ, մասնագիտական հմտություններ և փորձ, հետևել օրենսդրության փոփոխություններին:

Ավելին, նկատի ունենալով գոյություն ունեցող իրավահարաբերությունների և դրանց համապատասխան օրենսդրական փոփոխությունների իրականացման հանգամանքը, Օրենքով և Կանոնագրքով փաստաբանի համար ուղղակիորեն ամրագրվել է նաև իր գիտելիքներն ու մասնագիտական կարողությունը շարունակաբար կատարելագործելու պարտավորությունը: Ընդ որում, նման պարտավորության կատարումն իր հերթին ենթադրում է ոչ միայն անձնական ուժերի և միջոցների հաշվին մասնագիտական ինքնուրույն կատարելագործումը, այլ նաև Պալատի աջակցությամբ, որն իր հերթին կայանում է խնդրահարույց, ինչպես նաև հետաքրքրություն ունեցող տարատեսակ թեմաներով վերապատրաստման դասընթացների կազմակերպմամբ՝ այդ թվում նաև քրեական օրենսդրության արդիականացման վերաբերյալ[2]: Հարկ է նաև նշել, որ փաստաբանը ցանկացած դեպքում իրավական օգնություն ցույց տալու հանձնարարությունն ընդունելիս պետք է նկատի ունենա այն կատարելու իր մասնագիտական հնարավորությունները և ըստ այդմ հրաժարվի հանձնարարությունն ընդունելուց, եթե պարզում է կամ եթե տվյալ իրավիճակում ողջամտորեն պարտավոր է ենթադրել, որ չունի անհրաժեշտ գիտելիքներ և փորձ տվյալ գործով վստահորդին որակյալ իրավաբանական օգնություն ցույց տալու համար:

Փաստաբանի մասնագիտական բարձր որակավորումը և իր պարտականությունների բարեխիղճ կատարումը փաստաբանության ինստիտուտի հանրային ընկալման առանցքային տարրերից են, որոնց բացակայությունն արժեզրկում է փաստաբանի՝ որպես իրավապաշտպան և արդարադատության կայացմանը նպաստող գործառույթներ իրականացնող անձի հասարակական նշանակությունը:

Հարկ է նշել, որ հանրային պաշտպան, փաստաբան Արմեն Սարգսյանին, ըստ էության, վերագրվում է վերջինիս կողմից քրեական գործերով մեղադրողի հետ մեղադրյալի նկատմամբ ազատազրկման ձևով պատժատեսակի շուրջ համաձայնության գալով՝ առերևույթ օրենսդրության և դրա փոփոխությունների չիմացություն դրսևորելու, օրենսդրության փոփոխություններին բավարար չափով չհետևելու, ինչպես նաև Գրասենյակի ղեկավարի հանձնարարություններն ընդունելիս դրանք կատարելու իր մասնագիտական հնարավորությունները նկատի չունենալու վարքագիծ:

Սույն կարգապահական գործի շրջանակներում, Դիմողի և Փաստաբանի կողմից ներկայացված բացատրությունների և ապացույցների ուսումնասիրության արդյունքներով Հանձնաժողովն արձանագրում է, որ Պալատի հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի հանձնարարության հիման վրա թիվ ԳԴ4/0042/01/22 քրեական գործով մեղադրյալի պաշտպանությունը ստանձնելիս, Փաստաբանը պետք է հաշվի առներ փաստաբանական գործունեության հասարակական-իրավական նշանակությունը և փաստաբանի կարգավիճակի բաղկացուցիչ մաս կազմող ձեռնհասությունը՝

[2] https://www.advocates.am/news/view/2971.html; https://www.advocates.am/news/view/2947.html

մասնավորապես, տիրապետեր տվյալ պահին գործող օրենսդրությանը և ըստ այդմ՝ հաշվի առնելով իր մասնագիտական պատրաստվածությունը, հրաժարվեր հանձնարարությունն ընդունելուց կամ, հակառակ դեպքում, արդեն իսկ ստանձնած հանձնարարությամբ իր վստահորդի իրավունքները լավագույնս պաշտպանելու համար բավարար չափով կատարելագործեր իր գիտելիքներն ու մասնագիտական կարողությունները:

Այս համատեքստում, Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում ընդգծել այն, որ թիվ ԳԴ4/0042/01/22 քրեական գործով՝ մեղադրյալ էմիլ Արայի Հարությունյանի պաշտպանությունը հանրային պաշտպան, փաստաբան Արմեն Սարգսյանի կողմից ստանձնելուց հետո՝ նշված քրեական գործերի քննության ընթացքում 01.07.2022 թվականին փաստացի ուժի մեջ է մտել նոր ՀՀ քրեական օրենսգիրքը, որի 67-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ առաջին անգամ ոչ մեծ ծանրության հանցագործություն կատարած անձը չի կարող դատապարտվել ազատազրկման, ինչի մասին Փաստաբանն ըստ էության տեղեկացված չի եղել: Նման եզրահանգման հանգելիս Հանձնաժողովը ելնում է Փաստաբանի բարեխղճության կանխավարկածից և հավանական չի համարում, որ Փաստաբանն ի վնաս վստահորդի համաձայնությունը կնքել է գիտակցաբար՝ տեղեկացված լինելով օրենքի համապատասխան կարգավորումների մասին:

Ավելին, Փաստաբանը՝ քրեական օրենսդրության փոփոխությունների մասին տեղեկացված լինելու և իր մասնագիտական գիտելիքներն ու կարողությունները շարունակաբար կատարելագործելու պարտավորությունից բացի, պետք է նաև հաշվի առներ իր մասնագիտական հնարավորությունները և հրաժարվեր հանձնարարությունն ընդունելուց՝ հաշվի առնելով, որ կոնկրետ գործով կիրառելի օրենսդրությունը փոփոխվել է, իսկ Փաստաբանը խնդրո առարկա փոփոխություններին, փաստորեն, ծանոթ չի եղել:

Նման պայմաններում, սույն գործում առկա ապացույցները և Փաստաբանի բացատրությունները հաշվի առնելով՝ Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում ընդգծել այն հանգամանքը, որ չնայած էմիլ Արայի Հարությունյանի նկատմամբ կիրառելի էին նոր ՀՀ քրեական օրենսգրքի կարգավորումները՝ մասնավորապես նաև ազատազրկվելու արգելքը, այնուամենայնիվ, վերջինս թիվ ԳԴ4/0042/01/22 քրեական գործով մեղավոր է ճանաչվել ոչ մեծ ծանրության հանցագործությունների կատարման մեջ, և նրա նկատմամբ նշանակվել է ազատազրկման տեսքով պատիժ՝ հիմք ընդունելով այն համաձայնությունը, որը կնքվել են մեղադրանքը պաշտպանող դատախազի և նրանց պաշտպանի (Փաստաբանի) միջև, մինչդեռ որպես առաջին անգամ ոչ մեծ ծանրության հանցագործություն կատարած անձ՝ էմիլ Արայի Հարությունյանը չէր կարող դատապարտվել ազատազրկման, որպիսի հանգամանքը Փաստաբանն իր հերթին պետք է հաշվի առներ: Ինչ վերաբերում է Փաստաբանի այն դիրքորոշմանը, թե Էմիլ Արայի Հարությունյանի՝ առաջին անգամ ոչ մեծ ծանրության հանցանք կատարած անձ լինելու հանգամանքը վիճելի է՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ այլ հանցանքի առթիվ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի բացակայության պայմաններում անձի՝ առաջին անգամ հանցանք կատարած լինելու հանգամանքը կասկածի տակ առնելը չի համապատասխանում անմեղության կանխավարկածին:

Նման պայմաններում, Հանձնաժողովը, գնահատելով սույն կարգապահական գործի քննության ընթացքում ձեռք բերված նյութերը, ինչպես նաև Դիմողի և Փաստաբանի կողմից ներկայացված բացատրությունները և ապացույցներն իրենց ամբողջության մեջ, գտնում է, որ Փաստաբանի վարքագծում առկա են Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի,

ինչպես նաև Կանոնագրքի 2.7.2, 2.8.1 և 3.1.7 ենթակետերի պահանջների խախտման հատկանիշները:

7. <u>Կարգապահական տույժի ընտրությունը</u>.

Օրենքի 39.10 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանի կարգապահական պատասխանատվության հարցը քննելուց հետո փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կարող է փաստաբանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի.*

1) նկատողություն.

2) խիստ նկատողություն.

3) լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցել.

4) տուգանք.

5) փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում:

Օրենքի 39.10 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:*

Օրենքի 39.10 հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցելու ժամաքանակը որոշում է փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը: Լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցելը կարող է կիրառվել նաև որպես լրացուցիչ տույժի միջոց սույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ և 4-րդ կետերով նախատեսված տույժերից մեկի կիրառման հետ մեկտեղ:*

Անդրադառնալով նշանակվող կարգապահական տույժի տեսակին՝ Հանձնաժողովը հաշվի է առնում վերոնշյալ հանգամանքները, այդ թվում՝ խախտման բնույթը՝ մասնավորապես այն, որ խախտումն իր բնույթով խաթարում է փաստաբանի վստահելիությունն ու վնասում է փաստաբանի մասնագիտական պատրաստվածության վերաբերյալ հանրային ընկալմանը: Հանձնաժողովը հաշվի է առնում նաև Փաստաբանի մեղքի աստիճանը՝ մասնավորապես այն, որ առկա պայմաններում Փաստաբանը պարտավոր էր գիտակցել իր վարքագծի ոչ իրավաչափ բնույթն ու թույլ չտալ այդպիսի վարքագիծ: Միևնույն ժամանակ Հանձնաժողովը հաշվի է առնում Փաստաբանի անձը բնութագրող հանգամանքները՝ մասնավորապես կարգապահական տույժերի բացակայությունը, ինչից ելնելով՝ Հանձնաժողովը վերոգրյալի համակցված գնահատման արդյունքում Փաստաբանի նկատմամբ որպես հիմնական կարգապահական տույժ կիրառում է «նկատողություն», իսկ որպես լրացուցիչ կարգապահական տույժ՝ «լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցել»՝ «Քրեական դատավարություն» թեմայով, «առկա» եղանակով, իր հաշվին՝ 4 ակադեմիական ժամ տևողությամբ:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենքի 11.1-րդ հոդվածի 3-րդ մասի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 8-րդ մասի, 39.10-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերի պահանջներով՝ Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Արմեն Վանիկի Սարգսյանի (արտոնագիր՝ թիվ 1130) նկատմամբ կիրառել հիմնական կարգապահական տույժ՝ «նկատողություն» և լրացուցիչ կարգապահական տույժ՝ իր հաշվին լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցություն «Քրեական դատավարություն» թեմայով, 4 ակադեմիական ժամ ժամաքանակով՝ «Փաստաբանության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի, ինչպես նաև Կանոնագրքի 2.7.2, 2.8.1 և 3.1.7 ենթակետերի խախտման համար:

2. Հանձնարարել Հանձնաժողովի նիստերի քարտուղարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

<u>Ծանոթություն</u>. *Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդ կամ դատական կարգով այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումը ուժի մեջ է մտնում Փաստաբանի կողմից ստանալու հաջորդ օրվանից:*

ՀՀ փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի
նախագահ՝ **Տաթևիկ Շալջյան**

թիվ ԿԳ-23025-2-Ա
02 նոյեմբերի 2023թ.
ք.Երևան